



The European Union’s “Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia” Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief Համառոտագիր



This project is funded by the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրամիության կողմից



ԲՐԻՏԻՇ ԲԱՈՒՆՍԻԼ



International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն



This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

Ինչպե՞ս պատասխանել անհանդուրժողականության ու խտրականության մարտահրավերներին

Համառոտագիր



Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Հին աշխարհի նոր կարկատանները

Արևմուտքում միգրացիայի խնդիրներն այլևս անբաժանելի են այլատյացության, անհանդուրժողականության և խտրականության հարցերից: Աշխատուժի պակասը լրացնելու համար շատ երկրներ բացեցին դռները տնտեսական միգրանտների համար: Նման երկրներում ձևավորվեցին ուրույն կյանքով ապրող համայնքներ:

Հնաբնակների և նորեկների միջև տարբերությունների ընկալումը մնում էր անհանդուրժողականության արմատները: Խնդիրը սրեց ահաբեկչության դեմ ծավալված պայքարը: Խորացավ տեղաբնակների ու մահմեդական և, անգամ, ոչ-մահմեդական համայնքների միջև անջրպետը: Անհանդուրժողականության հարցերը կրկին վերադարձան արևմտյան հասարակությունների և միջազգային կազմակերպությունների օրակարգ: Եվ եթե նախորդ դարի կեսերին Արևմուտքն այս մարտահրավերներին արձագանքում էր ռասիզմի ու խտրականության այլ ձևերի դեմ պայքարով, ապա ներկա դարասկզբին հիմնական դեղամիջոցը դարձել է հանդուրժողականության քարոզումը:

Այս դեղամիջոցը սակայն ունի նկատելի թերություն. եթե խտրականությունը հնարավոր է սահմանել իրավաբանորեն և ստեղծել դրան հակազդելու միջազգային և ներպետական ընթացակարգեր ու գործիքներ, ապա հանդուրժողականության պարագայում միջոցներն ու դրանց արդյունքները միշտ չէ, որ շոշափելի ու տեսանելի են, հատկապես՝ կարճաժամկետ հատվածում:

Հայկական ծիածանը քսանմեկերորդ դարում

Հայաստանը միացել և/կամ վավերացրել է խտրականության վերացմանն ուղղված բոլոր միջազգային հիմնական իրավական գործիքները: Այդուհանդերձ, գրեթե միատարր հասարակություն ունեցող Հայաստանում, խտրականության խնդիրը երբևէ լրջորեն չի քննարկվել: Միաժամանակ, անհերքելի է, որ Հայաստանը, որպես միգրանտներ «արտահանող» երկիր, շահագրգիռ է արտերկրում սեփական քաղաքացիների և սփյուռքահայերի իրավունքների պաշտպանության հարցում: Այս տեսանկյունից, անհանդուրժողականության և խտրականության և հե՛նց այդ համատեքստում՝ նաև հայատյացության դեմ պայքարը դառնում է Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքային խնդիր:

Սակայն, ակներևաբար, այս խնդրում հնարավոր չէ սահմանագիծ անցկացնել արտաքին և ներքին մոտեցումների միջև: Ուստի և անհրաժեշտ է Հայաստանում ձևավորել ու զարգացնել հայերի՝ որպես բազմամշակութային ազգի գիտակցությունը: Բազմամշակույթ հայությունը ներառում է ինչպես մեր երկրում բնակվող տարբեր փոքրամասնությունների մշակույթը, այդպես էլ, լինելով աշխարհասփյուռ ազգ, կրում է մի շարք այլ մշակույթների շարունակական ազդեցությունը:

Ի՞նչ անել

Ավելին է, որ Հայաստանի հանրությունը կարիք ունի անդրադառնալու կրոնական, թերևս նվազ չափով՝ ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև սոցիալական տարբեր շերտերի հանդեպ առկա անհանդուրժողականության և խտրականության երևույթներին: Այս համատեքստում հարկ է ձևավորել խտրականության, անհանդուրժողականության և այլատյացության կանխման, դրանց դրսևորումներին պատշաճ արձագանքման գործուն մեխանիզմներ: Սա, նախևառաջ, վերաբերում է ազգային կամ կրոնական ատելությամբ դրդված հանցագործություններին: Թեև այս երևույթները հիմնականում քրեականացված են, օրակարգային է նման հանցագործություններին

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org



իրավապահ մարմինների և ՀՀ Գլխավոր դատախազության արձագանքելու կարողությունների զարգացումը, դրանց գործունեության համակարգման և միջգերատեսչական համագործակցության ապահովումը: Արդիական է նաև նման հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության կառավարման բարելավումը, մասնավորապես՝ վիճակագրության պարբերական ամփոփումը, ինչը հնարավորություն կընձեռնի վերլուծել նման դոսևորումների շարժառիթներն ու միտումները, կանխել և հետապնդել նման հանցագործությունները:

Անվիճելի է, որ յուրաքանչյուրը պետք է իրական հնարավորություն ունենա օրինական միջոցներով պաշտպանելու սեփական իրավունքները՝ իր անձի հանդեպ ապօրինի խտրականության կիրառման պարագայում: Նման իրավիճակում հայտնված մարդուն էական օգնություն կարող է ցուցաբերել իրավաբանական օժանդակության սուբսիդավորումը պետության, ինչպես նաև նմանատիպ իրավական աջակցությունը հասարակական կազմակերպությունների կողմից: Չէ՞ որ խտրականության զոհ հաճախ դառնում են հենց սոցիալական խոցելի խմբերի ներկայացուցիչները:

Անհանդուրժողականության դեմ պայքարում կարևոր դեր ունեն պետական մարմիններն ու հանրային ծառայություններ մատուցող հաստատությունները: Առանձնահատուկ դեր պիտի վերապահել կրթական հաստատություններին և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին: Հանդուրժողականության մշակույթը պետք է ներառված լինի կրթական ծրագրերում: Սա անհրաժեշտ է աշակերտների և ուսանողների մեջ՝ անկախ ծագումից և կրոնական պատկանելությունից, իրավահավասարության ու արժանապատվության գիտակցությունն արմատավորելու նպատակով: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին առընթեր կարող է ձևավորվել խորհրդատվական մարմին, որը կծառայի որպես ըստ այս կամ այն հատկանիշի հասարակությունում արձանագրվող անհանդուրժողականության դեպքերին արագ արձագանքելու գործիք:

Եվ վերջապես հատկապես կարևոր է, որ երկրի քաղաքական ընտրախավը՝ թե՛ իշխող, թե՛ ընդդիմադիր դիրքերում գտնվողները, սովորեն քննադատել և քննադատվել՝ չվերածելով քննադատությունն անձնական թշնամանքի, իսկ քննադատողին՝ ոխերիմ թշնամու: Քաղաքական ընտրախավը պետք է քաջ գիտակցի, որ յուրաքանչյուրն ինքն է որոշում, թե ինչ է ուզում հանդուրժել իր հասարակական կյանքում: Եթե նման ցանկությունը չի վերածվում մարդկանց ֆիզիկական անվտանգությանն ու կյանքին սպառնալիքի, չի դառնում քրեորեն հետապնդելի արարք և չկա հանցակազմ, ապա այն օրինական է և առնվազն արժանի է հանդուրժված լինելու:

Համառոտագիրը մշակվել է «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագրի շրջանակներում 2008թ-ի դեկտեմբերի 23-ին կայացած կլոր սեղանի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: